



Մարդու իրավունքները Հայաստանում

Մենք յուրաքանչյուր քաղաքացու կողքին ենք....

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

2009 թ. դեկտեմբերի 10-ին՝ մարդու իրավունքների միջազգային օրը **ՀԲԱ Վանաձորի գրասենյակը** հանդես է գալիս Լոռու մարզում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի վերաբերյալ **հաշվետվությամբ**:

Հաշվետվության մեջ ներկայացվում են գրասենյակ դիմած քաղաքացիների կողմից **բարձրացված խնդիրները**, ինչպես նաև դրանց **լուծմանն ուղղված կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումները**:

Հաշվետվությունը միաժամանակ **ներառում է կազմակերպությունում գործող Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնի /Լոռու մարզի հակակոռուպցիոն կենտրոն/ մեկ տարվա գործունեության արդյունքները**:

Իրենց խախտված իրավունքների պաշտպանության, ինչպես նաև իրավական տեղեկատվություն ստանալու նպատակով **կազմակերպություն դիմել են ավելի քան 310 քաղաքացիներ**: Դրանցից կոռուպցիա և **կոռուպցիոն ռիսկեր պարունակել են մոտ 280** քաղաքացիների կողմից բարձրացված բողոքները:

Կոռուպցիոն ռիսկեր պարունակողները այն դեպքերն են, երբ պետական պաշտոնյաների գործողությունները դեռևս կոռուպցիոն հանցագործություն չեն պարունակել, բայց հակված են եղել դրան:

Նշված **բողոքները ներառում է** ամբողջ **Լոռու մարզը, Ալավերդի, Տաշիր, Սպիտակ, Ստեփանավան քաղաքային համայնքները որտեղ գործում են կազմակերպության տեղական ներկայացուցչությունները**:

Հաճախ մարդու իրավունքների խախտման փաստերը իրենց մեջ պարունակել են կոռուպցիոն ռիսկեր և շատ դժվար է եղել դրանց տարանջատել:

Կազմակերպության կողմից առանձին միջոցառումներ են իրականացվել **գորակոչիկների, թմրամիջոց գործածողների, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ**:

2009 թ. հունիսից նոյեմբեր ամիսներին մարդու իրավունքների վիճակի **առանձին ուսումնասիրություն է իրականացվել նաև տեղական ինքնակարավարման մարմինների գործունեության ոլորտում**:

Ներկայումս անփոփոխվում են արդյունքները, որի հիման վրա էլ կտպագրվի զեկույց:

Այսպես, 2009 թ. հուլիսից մինչև դեկտեմբեր ամիսները ՀԲԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցները ուսումնասիրություններ են իրականացրել Հայաստանի Հարապետությունում գործող թվով **8 նյարդահոգեբուժական բուժհաստատություններում**:

Ամբողջ տարվա ընթացքում իրականացվել է թմրամիջոցներ գործածողների **արդար դատաքննության իրավունքի 68 դատական նիստերի մոնիթորինգ**:



2009 թ. նոյեմբերին ուսումնասիրություններ են իրականացվել **ՀՀ ոստիկանության Լոռու մարզի վեց բաժիններում**՝ քաղաքացիների ընդունելության մատչելիության և ոստիկանների աշխատանքային պայմանների մասով: Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում կազմվել է համապատասխան զեկույց:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում **նախատեսվում է տպագրել համապատասխան զեկույցներ**՝ ՀՀ կառավարությանն ուղղված բարեփոխումների համապատասխան առաջարկություններով:

2009 թ. իրականացվել է նաև **աշնանային և գարնանային զորակոչի մոնիթորինգ**, որի արդյունքում **տպագրված ղեկույցը հասանելի է www.hcav.am էլեկտրոնային էջում**:

Քաղաքացիները առավել **հաճախ** դիմել են իրենց **սեփականության իրավունքների խախտմանը** աջակցելու համար:

Կոռուպցիա և կոռուպցիոն ռիսկեր պարունակող բողոքները հիմնականում վերաբերվել են **իրավապահ մարմինների գործողություններին**:

Բողոքներ են ներկայացվել նաև **տեղական ինքնակառավարման մարմինների, Դատական ակտերի հարկադիր կատարման, անշարժ գույքի պեկատակ ռեգիստրի** աշխատակիցների կողմից կոռուպցիայ և կոռուպցիոն ռիսկերի դեպքերով:

Կոռուպցիոն դեպքեր պարունակող գործերի վերաբերյալ կենտրոնը ՀՀ գլխավոր և Լոռու մարզի **դատախազություն ներկայացրել է ավելի քան 17 հաղորդումներ**: Դրանց զգալի մասը՝ մոտ **10-ը վերաբերվել է իրավապահ մարմինների** կողմից պաշտոնական լիազորությունների անցմանը: Ցավոք սրտի, իրավապահ մարմինների գործունեության վերաբերյալ ներկայացված **հաղորդումներից ոչ մեկի կապակցությամբ քրեական գործ չի հարուցվել**: Քրեական գործ չհարուցելու վերաբերյալ **որոշումներից չորսը բողոքարկվել է դատական կարգով**, որոնք ներկայումս գտնվում են ՀՀ վճռաբեկ դատարանում:

Կազմակերպությունը կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում **մեկ քրեական գործ է հարուցվել պետական պաշտոնիայի դեմ պաշտոնական կեղծիքի հիմքով**: Սա այն գործերից է, որտեղ կոռուպցիոն հանցագործությունը դարձել է մարդու իրավունքների խախտման պատճառ: Խնդիրը կայանում է նրանում, որ Վանաձոր քաղաքի «Բազումի» համատիրության նախագահի կողմից տրվել է կեղծ տեղեկանք, որի արդյունքում խախտվել է մեկ այլ քաղաքացու սեփականության իրավունքը: Վերջինս էլ խնդրել է կազմակերպությանը աջակցել իր խախտված իրավունքների վերականգմանը: **Կազմակերպությունը քաղաքացու անունից պատրաստել է հաղորդում**, որի հիման վրա **հարուցվել է քրեական գործ** Վանաձոր քաղաքի «Բազումի» համատիրության նախագահի նկատմամբ:

Խախտված սեփականության իրավունքի վերականգման համար կազմակերպության աջակցությամբ քաղաքացին **քաղաքացիական հայցով դիմել է դատարան**: Ներկայումս քաղաքացիական գործը դեռևս վերջնական լուծում չի ստացել:

Այս գործում առավել **զավեշտալի**ն այն է, որ «Բազումի» համատիրության **նախագահը պատասխանատվության չի ենթարկվել**, նրա նկատմամբ կիրառվել է



համաներման ակտ և նա շարունակել է պաշտոնավարել: **Անպաժելիության** նման մթնոլորտ է առկա նաև **իրավապահ մարմինների գործունեությունում**:

Մոտ 10 փաստ է արձանագրվել իրավապահ մարմինների կողմից պաշտոնական լիազորությունների անցման հիմքով, որն էլ **պատճառ է հանդիսացել խոշտանգումների և այլ դաժան անմարդկային վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտման**:

Կազմակերպություն դիմած քաղաքացիների **խնդիրների 1/3-ը դրական լուծում է ստացել**, այսինքն՝ վերականգնվել է քաղաքացու խախտված իրավունքը կամ կանխվել է իրավունքի խախտման վտանգը: Այս թիվն իր մեջ ներառում է նաև **փոքր հաջողությունները**: Խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ պետական պաշտոնյաների կողմից քաղաքացիների իրավունքների խախտման **փորձը կանխվել է կազմակերպության միջամտությամբ**:

Օրինակ՝ երբ պետական պաշտոնյաները մերժել են տեղեկատվություն տրամադրել, կամ թերացել են իրենց այս կամ այն լիազորությունների կատարման գործում:

Նշված դեպքերում քաղաքացիների համար կազմակերպության կողմից պատրաստվել են համապատասխան դիմումներ, որոնք էլ համապատասխան պաշտոնյաների կողմից բավարարվել են:

Ամբողջ տարվա ընթացքում կազմակերպությունը **ավելի քան 40 հայցադիմում է ներկայացրել դատարան**:

Կազմակերպությունը **աննախադեպ դատական գործերի** հեղինակ է, ինչպիսին է՝ **ՀՀ ոստիկանության, ՀՀ պաշտպանության նախարարության, Լոռու մարզի դատախազության անգործությունը վերացնելու հայցապահանջները**:

Սրանք այն նախադեպերն են, որոնք **տանում են դեպի համակարգային փոփոխության** և հույս ունենք, որ մի օր Հայաստանում չեն խախտվի մարդու իրավունքները:

Առավել մանրամասների համար կարող եք դիմել Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ՝ Անի Ղամբարյանին:

Հեռ.՝ 0322 4 22 68

էլ. փոստ՝ hcav@hcav.am